ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2007)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 2-ի նիստի՝
«2007 թվականի նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման
տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ՀՀ վճարահաշվարկային, ֆինանսական համակարգի հիմնական
ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և ֆինանսական
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում
ընդգրկված է ՀՀ միջազգային պահուստների, փողի
ագրեգատների, ֆինանսական շուկայի և փոխարժեքների
վերաբերյալ տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(02.11.2007)

2007 թվականի նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2007 թվականի նոյեմբերի 2-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Ա. Նորեկյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումների, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի հավանական ռիսկերի ներկայացումը:

Գնաճ

12-ամսյա գնաճը 2007 թվականի սեպտեմբերին արձանագրված 2.7% ցուցանիշի համեմատությամբ հոկտեմբերին կազմել է 5.7%[1], գերազանցելով տարեկան նպատակային 4±1.5 ցուցանիշը: Գների շեշտակի աճը պայմանավորվել է գերազանցապես արտաքին գործոններով, մասնավորապես՝ միջազգային գների աճի հետևանքով «Հացամթերք» և «Կենդանական ու բուսական յուղ» ապրանքախմբերի գների բարձրացմամբ, որոնք հունիս-հոկտեմբերին ավելացել են համապատասխանաբար ավելի քան 21%-ով և 31%-ով՝ նպաստելով գնաճին 3.1 և 1.3 տոկոսային կետով:

Միջազգային գների նման կտրուկ փոփոխությունները դիտվում են որպես արտաքին ցնցում, որի ազդեցության չեզոքացումը դրամավարկային կարգավորման մարմինների կողմից մոնետար գործիքներով անհնար է: Սակայն այս պայմաններում առավել կարևորվում է մոնետար գործոններով պայմանավորված գնաճի կայուն և ցածր մակարդակի ապահովումը, որը, եթե բացառենք վերոհիշյալ ցնցման ազդեցությունը, հոկտեմբերին, նախորդ տարվա հոկտեմբերի համեմատությամբ, կազմել է 1.4%, իսկ դեկտեմբերի համեմատությամբ՝ -1.2%:

Միաժամանակ, նույն արտաքին ցնցումներով պայմանավորված, գնաճի նպատակային թիրախի էական գերազանցման ռիսկեր են առաջացել ամբողջ աշխարհում (հավելվածում ներկայացվում են նախկին ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում գնաճի նպատակային թիրախների և հոկտեմբերի դրությամբ գրանցված գնաճի համեմատական տվյալները):

Արտաքին միջավայր

Չորրորդ եռամսյակի սկիզբը նշանավորվել է ԱՄՆ դոլարի կանխատեսված արժեզրկմամբ, ինչի հետևանքով եվրոն հասել է իր պատմականորեն առավելագույն արժեքին՝ գերազանցելով 1.44 ԱՄՆ դոլար եվրոյի դիմաց մակարդակը: Վերջինս հիմնականում պայմանավորված է ԱՄՆ Ֆեդերալ պահուստային համակարգի կողմից տոկոսադրույքների նվազեցման քաղաքականությամբ, մինչդեռ Եվրոպական կենտրոնական բանկի կողմից ակնկալվում է եթե ոչ բարձրացում, ապա տոկոսադրույքների պահպանում նույն մակարդակի վրա:

Ինչ վերաբերում է հումքային ապրանքների գներին, ապա դրանք գերազանցել են կանխատեսումները՝ դրսևորելով աճի բարձր տեմպեր: Նավթի գները գրանցել են անվանական առավելագույն մակարդակները՝ Brent տեսակը Լոնդոնի Միջազգային նավթի բորսայում գերազանցել է բարելի դիմաց 90 ԱՄՆ դոլար, իսկ Light Sweet տեսակը Նյու Յորքի ապրանքահումքային բորսայում՝ 92 ԱՄՆ դոլար մակարդակը: Լոնդոնի

[1] *Հոկտեմբերին գնաճը կազմել է 3.1%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ՝ շուրջ 3%:*

մետաղների բորսայում ոսկու գները գերազանցել են ունցիայի դիմաց 800 ԱՄՆ դոլար, իսկ պղնձի գները պահպանել են իրենց բարձր մակարդակը՝ տոննայի դիմաց մոտ 8000 ԱՄՆ դոլար[2] մակարդակը:

Հացահատիկի միջազգային գները Չիկագոյի ապրանքահումքային բորսայում հոկտեմբերին կայունացել են բուշելի դիմաց 9 ԱՄՆ դոլար մակարդակի շուրջ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ 2006/2007 թվականների բերքահավաքի մասին տարածված լուրերը հաշվի էին առնվել շուկայի մասնակիցների կողմից, և նոր պատճառներ գների աճի համար չկային:

Միջազգային շուկաներում վերջին շրջանում արձանագրված կաթնամթերքի գների աճը սկսել է արտահայտվել նաև Հայաստանում գների վրա, մասնավորապես՝ ներմուծվող կարագի գների բարձրացման պատճառով: Նորզելանդական կարագի արտահանման գինը միջազգային շուկաներում հոկտեմբերին հասել է տոննայի դիմաց գրեթե 3800 ԱՄՆ դոլարի, մինչդեռ օգոստոսի սկզբին կազմել է ընդամենը 2880 ԱՄՆ դոլար, որը համապատասխանաբար ազդել է ներքին գների վրա: Աճի պատճառը հիմնականում համաշխարհային պահանջարկի աճը և Եվրոմիության կողմից կաթնամթերքի լրահատկացումների վերացումն էր: Գների էական աճ է գրանցվել նաև բուսական յուղի միջազգային շուկայում:

Այսպիսով, ինչպես և ակնկալվում էր, արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները էապես ավելացել են և նույնիսկ գերազանցել սպասումները:

Համախառն առաջարկ

Տարվա երրորդ եռամսյակում արձանագրվել է տնտեսական աճի բավականին բարձր ցուցանիշ՝ 15.4%, որը թեև փոքր-ինչ զիջել է կանխատեսված ցուցանիշը, սակայն զգալիորեն գերազանցել է նախորդ եռամսյակի ցուցանիշը: Ընդ որում, տնտեսության բոլոր ճյուղերում գրանցվել է ավելացված արժեքի աճ՝ հիմնականում գտնվելով կանխատեսվածի շրջանակում:

Տնտեսական աճին առավել մեծ նպաստում են ունեցել **շինարարության** ճյուղը և **ծառայությունների** ոլորտը, որոնցում շարունակվել են առաջին եռամսյակից արձանագրվող միտումները: 2007 թվականի հունվար-սեպտեմբերին շինարարությունում արձանագրված ավելացված արժեքի 18.7% աճը առավելապես պայմանավորվել է տրանսպորտի, կապի և էներգետիկայի ճյուղերում ընթացող մեծածավալ ներդրումներով: Ծառայությունների ոլորտում առաջանցիկ տեմպերով շարունակել է ավելանալ տրանսպորտի և կապի ծառայությունների ծավալը, ինչի արդյունքում արձանագրվել է ծառայությունների ավելացված արժեքի աճի տեմպի արագացման միտում, որը երրորդ եռամսյակին կազմել է տ/տ 16.6%:

Ինչ վերաբերում է **արդյունաբերությանը**՝ շարունակվել են տարվա սկզբից արձանագրվող միտումները: Մասնավորապես, ադամանդագործության ենթաճյուղում շարունակվող զգալի անկման հետ մեկտեղ աճի բարձր տեմպեր են արձանագրվել սննդի (առաջին հերթին՝ կոնյակի, պահածոների և հրուշակեղենի արտադրություն), մետաղագործական և քիմիական արդյունաբերության ենթաճյուղերում: Արդյունքում, թեև արդյունաբերական թողարկման ծավալների իրական աճը հունվար-սեպտեմբերին ավելացել է 2.1%-ով, առանց ադամանդագործության այդ ցուցանիշը կազմել է 8.3%: Ընդ որում, երրորդ եռամսյակում արդյունաբերության ավելացված արժեքի տ/տ աճը, գերազանցելով նախորդ եռամսյակի համապատասխան ցուցանիշը, կազմել է 3%:

Գյուղատնտեսությունում տարվա առաջին ինն ամիսներին արձանագրվել է ավելացված արժեքի 8.3% իրական աճ. ընդ որում, միայն երրորդ եռամսյակում տ/տ աճը կազմել է մոտ 14%՝ հիմնականում պայմանավորված բուսաբուծության արտադրանքի 10% աճով, մասնավորապես՝ մրգի և բանջարեղենի հարուստ բերքի ստացմամբ:

Համախառն պահանջարկ

2007 թվականի երրորդ եռամսյակի սպառման և ներդրումների փաստացի տվյալները դեռևս բացակայում են, սակայն առկա են երկրորդ եռամսյակի փաստացի տվյալները[3], որի հիման վրա վերանայվել են երրորդ եռամսյակի գնահատումները՝ մասնա-

[2] *Ցուցանիշները վերցված են Bloomberg համակարգից:*

[3] *Մասնավոր սպառման և ներդրումների երկրորդ եռամսյակի փաստացի ցուցանիշները շեղվել են կանխատեսվածից: Ընդ որում, մասնավոր սպառման աճը գերազանցել է կանխատեսված մակարդակը 3.1 տոկոսային կետով և կազմել 12.9%, իսկ մասնավոր ներդրումների փաստացի աճը կազմել է 13.6՝ 5.5 տոկոսային կետով ցածր, քան կանխատեսվել էր:*

վոր սպառումն աճի ուղղությամբ, մասնավոր ներդրումները՝ նվազման: Մասնավոր սպառման իրական աճը գնահատված 10.3%-ի փոխարեն կկազմի 11.0%[4], իսկ մասնավոր ներդրումների իրական աճի գնահատումը նվազեցվել է 0.7 տոկոսային կետով և կազմել 17.2%:

Երրորդ եռամսյակն ավարտվել է ապրանքների և ծառայությունների արտահանման դոլարային ծավալների տ/տ 27.5% աճով[5]: Արտահանման գրանցված աճը պայմանավորվել է արտաքին միջավայրի զարգացումներով՝ մասամբ կապված արտահանման շուկաներում միջանկյալ սպառման ապրանքների գների տ/տ 14.3% աճի, ինչպես նաև արդյունաբերության աճի բարձր տեմպերի պահպանման հետ (առանց ադամանդի): Ապրանքների և ծառայությունների իրական ծավալների աճը ընթացիկ եռամսյակում կազմել է 18.5%:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման[6] տ/տ աճը երրորդ եռամսյակում կազմել է 44.5%, ինչը գրեթե համահունչ էր վերջին գնահատումներին: Ներմուծման բարձր աճը արտացոլում է տնտեսության պահանջարկի կայուն աճը գրեթե բոլոր ապրանքատեսակների նկատմամբ (սպառողական, հումքային և ներդրումային), ինչպես նաև դրամի փոխարժեքի արժևորումը: Ներմուծման դոլարային ծավալների աճին նպաստել է նաև միջանկյալ սպառման ապրանքների ներմուծման գների տ/տ 16.1% աճը: Անվանական ծավալների նման բարձր աճի պարագայում ապրանքների և ծառայությունների իրական ծավալներն ավելացել են տ/տ 33.0%-ով:

Աշխատանքի շուկա

2007 թվականի երրորդ եռամսյակում աշխատանքի շուկայի ցուցանիշները շարունակել են գնաճային ճնշումներ ստեղծել սպառողական շուկայում: Եռամսյակի ընթացքում արձանագրվել է արտադրողականության աննախադեպ բարձր աճ՝ 15%, որը էականորեն մեղմել է աշխատանքի շուկայից եկող գնաճային ճնշումները: Արձանագրվել է տնտեսության միջին անվանական աշխատավարձի 22.3% աճ՝ գնահատված 20.3%-ի փոխարեն: Գործազրկության մակարդակը կազմել է 7.1%՝ համընկնելով գնահատմանը:

Ոչ առևտրային բնույթի փոխանցումների ներհոսքի շարունակական աճի տեմպերի արագացում է արձանագրվել երրորդ եռամսյակում: Սեպտեմբերին գրանցվել է ոչ առևտրային բնույթի դուրս փոխանցումների տ/տ 24.2% նվազում՝ ի տարբերություն տարեսկզբից գրանցվող միջին 46% աճի: Արդյունքում, բանկային համակարգով ստացված ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքն ավելացել է տ/տ 46.3%-ով, ինչն ավելի է նախորդ ամսվա գնահատումներից: Դրամական փոխանցումների աճի բարձր տեմպերի պահպանումը կրում է Ռուսաստանի տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանման, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից Ռուսաստանի տնտեսությանը տրված լավատեսական գնահատումների ազդեցությունը:

Համախմբված բյուջե

2007 թվականի երրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածը գնաճի վրա ունեցել է 0.6% ընդլայնող ազդեցություն՝ կանխատեսված 1.27% ընդլայնող ազդեցության փոխարեն: Շեղումն առաջացել է եկամուտների մասով՝ պայմանավորված մոտ 8.0 մլրդ դրամ եկամուտների գերակատարմամբ: Դրա հետևանքով եկամուտներն ունեցել են ավելի մեծ զսպող ազդեցություն, քան կանխատեսված էր, որը սակայն որոշ չափով մեղմվել է փաստացի ՀՆԱ-ի ավելի բարձր ցուցանիշի արձանագրմամբ: Իսկ ծախսերի ազդակն ընդլայնող էր, որը կանխատեսվածի շրջանակում է:

Հոկտեմբեր ամսվա պետական հատվածի զարգացումները համահունչ են չորրորդ եռամսյակի կանխատեսումներին, և եռամսյակի արդյունքում հարկաբյուջետային քա-

---

[4] Գնահատումները կատարվել են նոր մեթոդաբանությամբ, որի հիմքում ընկած է եկամուտ-սպառում երկարաժամկետ կապի առկայությունը, ըստ որի գնահատվել է երկարաժամկետ կորինտեգրացիոն կապը, այնուհետև սխալների ճշգրտման մոդելի միջոցով կանխատեսվել մասնավոր սպառման դինամիկան:

[5] Հունվար-սեպտեմբերի տվյալներով՝ ապրանքների արտահանման (ՖՕԲ) ծավալների աճը կազմել է 22.8%, իսկ առանց ադամանդի՝ 37.2%: ՖՕԲ ցուցանիշի հիման վրա գնահատվել է արտահանման կրեդիտ ցուցանիշը, իսկ ծառայությունների արտահանման ցուցանիշները կանխատեսումներ են:

[6] Ապրանքների ներմուծման (ՍԻՖ) ծավալների աճը հունվար-սեպտեմբերի տվյալներով կազմել է 45.7%, իսկ առանց ադամանդի՝ 55.1%: ՍԻՖ ցուցանիշի հիման վրա գնահատվել է ներմուծման դեբետ ցուցանիշը, իսկ ծառայությունների ներմուծման ցուցանիշները կանխատեսումներ են:

ղաքականությունը կունենա մոտ 2.3% ընդլայնող ազդեցություն: Տարվա արդյունքում ակնկալվում է գնաճի վրա հարկաբյուջետային քաղաքականության մոտ 1% ընդլայնող ազդեցություն: Սակայն ծախսերի ճշգրտված ծրագրից շեղման և խնայողությունների ձևավորման պարագայում ինչպես չորրորդ եռամսյակում, այնպես էլ տարեկան կտրվածքով ծախսերը կունենան ավելի փոքր ընդլայնող ազդեցություն:

Ամփոփենք. իրական և հարկաբյուջետային հատվածներում արձանագրված միտումները հիմնականում համընկել են սույն թվականի հոկտեմբերի 2-ին կատարված կանխատեսումների հիմքում ընկած գնահատումներին, և չորրորդ եռամսյակից սկսած, մասնավոր ծախսումների առաջանցիկ աճի պայմաններում, սպառողական շուկայում գնաճային ճնշումները մեծանալու են:

Փող և վարկ

2007 թվականի երրորդ եռամսյակի դրամավարկային ցուցանիշների 12-ամսյա փաստացի միտումները, ինչպես ակնկալվում էր, էապես չեն տարբերվել նախորդ եռամսյակների միտումներից, ինչը հիմնականում պայմանավորված էր տնտեսության դրամայնացման ակտիվ գործընթացով: Այդ միտումը բարձր տեմպերով շարունակվել է նաև հոկտեմբերին, ինչի արդյունքում եռամսյակի առաջին ամսվա միտումներով դրամավարկային և հատկապես դրամային ցուցանիշների աճի տեմպերը զգալիորեն գերազանցել են եռամսյակի համար նախատեսված ցուցանիշները: Դրամի մեծ պահանջարկի համապատասխան՝ Կենտրոնական բանկը փողի բազան ավելացրել է տ/տ 40.6%-ով, որը, դրամային բազմարկչի 14.1% աճի պարագայում, հանգեցրել է դրամային զանգվածի 60.4% աճի: Վերջինիս կառուցվածքում շարունակել են բարձր տեմպերով ավելանալ ինչպես դրամային ավանդները, այնպես էլ շրջանառությունում գտնվող կանխիկ դրամը: Թեև հոկտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքի 0.25 տոկոսային կետով բարձրացմանն ու հետագա մեկ տարում ավելի զսպողական դրամավարկային քաղաքականության սցենարի նախանշմանը, այդուհանդերձ հոկտեմբերին փողի ագրեգատների աճի տեմպերը, նախորդ ամսվա համեմատ, հիմնականում պահպանվել են, քանի որ փոքր-ինչ արագացել են տնտեսության վարկավորման աճի տեմպերը՝ նախորդ ամսվա 64.6%-ից հասնելով 68.5%-ի:

Արձանագրեցին.

Վերջին ամիսներին միջազգային շուկայում նավթի, հացահատիկի, կենդանական և բուսական յուղերի միջազգային գների ակնկալվածից բարձր աճը, չնայած դրամի փոխարժեքի արժևորմանը, հանգեցրել է ներքին շուկայում բարձր գնաճային միջավայրի ձևավորման: Նման արտաքին ցնցումները դրամավարկային կարգավորման մարմինների ազդեցությունից դուրս են՝ կրելով ոչ մոնետար բնույթ, և դրանք անհնար է չեզոքացնել: Սակայն խորհուրդը համակարծիք է, որ կարևոր է նման ցնցումների երկրորդային ազդեցությունների չեզոքացումը, որոնք զուգորդվելով մասնավոր սպառման տեմպերի արագացմամբ և ակնկալվող բյուջետային ծախսերի ընդլայնողական ազդեցությամբ, շարունակելու են պահպանել գնաճային ճնշումները հետագա 12-ամսյա ժամանակահատվածում:

Այս պայմաններում խորհուրդը քննարկել է տոկոսադրույքների բարձրացման և զսպողական դրամավարկային քաղաքականության իրականացման հնարավոր սցենարները:

Որոշեցին.

Բարձրացնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 5.25%, ներգրավված դրամային միջոցների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 2.25% և 8.25%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2007թ. հունվար – սեպտեմբեր	2007թ. հունվար – սեպտեմբերի իրական աճի ինդեքսը 2006թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)	2007թ. հունվար – հոկտեմբեր	2007թ. հունվար – հոկտեմբերի իրական աճի ինդեքսը 2006թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	2016595.4	113.2	2400074.5	113.3
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	103.9	-	104.6
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	1860.2	116.4	2212.4	116.3
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	509443.1	102.1	574462.8	101.8
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	4477.6	98.9	4894.6	100.2
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	417791.4	108.3	532872.4	108.9
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	584372.2	109.8	668761.2	109.3
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	418669.6	118.3	490894.5	119.2
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	391278.5	117.0	442763.3	117.1
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	1402635.7	118.2 [1]	1591113.0	117.4 [1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	1350885.7	116.6 [1]	1525823.8	115.8 [1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	73999	115.8 [1]	74433 [2]	115.6 [1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1168.6	-	1167.1	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	84.5	-	84.0	-
Գործազրկության մակարդակը *(%)*	7.2	-	7.2	-

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2007 թ.	Սպառողական գների ինդեքս	Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս	Գների ինդեքս կապիտալ շինարարությունում	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.4	96.3	99.7	95.2
Փետրվար	100.2	101.9	99.9	96.2
Մարտ	99.4	101.1	101.3	98.6
Ապրիլ	100.1	102.8	100.1	101.0
Մայիս	102.1	98.1	100.7	97.8
Հունիս	99.7	99.7	100.2	78.4
Հուլիս	96.8	99.8	100.1	71.0
Օգոստոս	98.5	100.6	100.0	74.2
Սեպտեմբեր	100.7	100.0	100.0	90.7
Հոկտեմբեր	103.1	104.3	100.2	101.2
2007 թ. հունվար – հոկտեմբերը 2006 թ. հունվար – հոկտեմբերի համեմատությամբ	103..9	100.6	104.7	104.9

** Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:*

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2005*	*2006*	*2007*	*2007*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	5.4	2.5	2.4	2.4
Փետրվար	-0.7	0.2	0.2	2.6
Մարտ	-0.9	0.1	-0.6	2.0
Ապրիլ	-0.9	0.3	0.1	2.1
Մայիս	0.1	2.4	2.1	4.2
Հունիս	-1.4	-1.2	-0.3	3.9
Հուլիս	-4.5	-0.7	-3.2	0.6
Օգոստոս	-1.4	-0.9	-1.5	-0.8
Սեպտեմբեր	0.9	-0.3	0.7	-0.2
Հոկտեմբեր	0.1	0.2	3.1	3.0
Նոյեմբեր	1.1	1.0		
Դեկտեմբեր	2.3	1.6		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	-0.2	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	0.6	2.9		

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	**Նախորդ ամսվա նկատմամբ (%)**	**Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)**
ՍԳԻ	**103.1**	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**105.6**	**3.02**
Հացամթերք	109.1	2.5
Կենդանական և բուսական յուղեր	120.5	1.5
Բանջարեղեն	103.3	0.3
Միրգ	103.4	0.2
Միս և մսամթերք	101.1	0.2
Ձկնամթերք	121.7	0.2
Ոչ պարենային ապրանքներ	**100.7**	**0.11**
Հագուստ և գործվածք	103.0	0.08
Անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	101.2	0.04
Ծառայություններ	**100.1**	**0.03**

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [1]

Ժամանակաշրջան	2005	2006	2007
Նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.71	0.39	0.07
Փետրվար	-0.37	0.00	0.01
Մարտ	-0.26	0.06	-0.06
Ապրիլ	-0.26	0.12	0.01
Մայիս	-0.08	0.07	0.03
Հունիս	-0.10	-0.01	0.01
Հուլիս	-0.42	-0.06	-0.01
Օգոստոս	-0.28	-0.04	0.00
Սեպտեմբեր	0.29	0.02	0.36
Հոկտեմբեր	0.03	0.06	1.45
Նոյեմբեր	0.17	0.05	
Դեկտեմբեր	0.29	0.07	
Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.72	0.79	1.04
Փետրվար	1.07	1.18	1.02
Մարտ	0.71	1.38	0.92
Ապրիլ	0.13	1.61	0.65
Մայիս	-0.74	2.49	0.52
Հունիս	-0.57	2.26	1.74
Հուլիս	-0.78	3.20	1.37
Օգոստոս	-0.52	3.29	1.12
Սեպտեմբեր	0.26	2.67	1.62
Հոկտեմբեր	0.32	2.84	2.65
Նոյեմբեր	0.47	2.31	
Դեկտեմբեր	0.52	2.20	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՌԱՎԵԼ ԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ 10 ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [1]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Նախորդ ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**2.65**
Վճարովի դպրոց	0.18
Բրինձ	0.15
Միջին բժշկական անձնակազմի կողմից մատուցվող ծառայություններ	0.13
Այլ յուղեր (հալած յուղ)	0.12
Խառը կանաչի	0.09
Կարամել (տեղական)	0.09
Վճարովի ուսումնական հաստատություն (քոլեջ, վարժարան)	0.09
Մակարոն	0.08
Ախտորոշման կենտրոնների ծառայություններ	0.08
Բժիշկների և վիրաբույժների խորհրդատվական ծառայություններ	0.08


[1] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:*
[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:*

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Կենտրոնական բանկի կողմից գնված պետական արժեթղթեր	Պետական արժեթղթերի գծով վերագնման համաձայնագրեր	Ընդամենը	Կենտրոնական բանկում պետական հաշիվներ	Կենտրոնական բանկում այլ հաշիվներ	Ծրագրերի մի՛ջոցներ դրամով	Ծրագրերի մի՛ջոցներ արտարժույթով	Ընդամենը	
2006									
Դեկտեմբեր [2]	0	4024	4024	61533	96	0	111	61740	**-57716**
2007									
Հունվար	0	3971	3971	75286	94	0	110	75490	**-71520**
Փետրվար	0	3932	3932	76522	93	0	108	76723	**-72791**
Մարտ [2]	0	3765	3765	70179	95	0	111	70386	**-66621**
Ապրիլ	0	5787	5787	93875	94	0	109	94078	**-88291**
Մայիս	0	5648	5648	97279	450	3	107	97838	**-92190**
Հունիս [2]	0	5554	5554	98761	441	1	104	99307	**-93753**
Հուլիս	0	5692	5692	90524	424	3	103	91054	**-85361**
Օգոստոս	0	5494	5494	87510	565	1	103	88179	**-82685**
Սեպտեմբեր [2]	0	5251	5251	92440	563	1	103	93107	**-87856**
Հոկտեմբեր	0	5087	5087	93476	547	1	187	94212	**-89125**

[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:
[2] Ներառված են եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Ամփոփում	*2007 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2007 թ. հունվար – սեպտեմբերը 2006 թ. հունվար – սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2007 թ. հունվար – հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2007 թ. հունվար – հոկտեմբերը 2006 թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	835.4	122.8	939.4	118.6
Ներմուծում *(ՍԻՖ)*	2194.6	145.7	2518.7	146.2
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1359.2	164.6	1579.4	169.7

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ 2006 - 2007 ԹԹ.

հազար ԱՄՆ դոլար


Երկիր	2006 թվական								
	հոկտեմբեր			հունվար – հոկտեմբեր			ընդամենը 2006		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	81385	12807	68578	566276	89563	476713	739419	107835	631584
ԱՄՆ	8004	861	7144	78632	10585	68046	94491	13295	81196
Գերմանիա	693	2620	-1927	8892	8647	244	10737	10068	669
Ուկրաինա	749	704	44	6034	4880	1154	7770	6228	1542
Ֆրանսիա	573	351	222	5182	2807	2375	6478	3581	2897
Մեծ Բրիտանիա	551	289	262	7440	2232	5208	8709	2628	6081
Շվեյցարիա	432	98	334	5620	2213	3408	6566	2463	4103
Թուրքիա	140	691	-550	1074	5755	-4681	1272	7846	-6573
ԱՄԷ	152	1121	-969	2204	7012	-4807	2551	10048	-7497
Այլ երկրներ	7799	4582	3217	67747	34762	32985	82932	44444	38488
Ընդամենը	100477	24123	76354	749102	168456	580645	960926	208436	752490

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2007 թվական					
	հոկտեմբեր			հունվար – հոկտեմբեր		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստանի Դաշնություն	123239	11860	111379	850278	105806	744472
ԱՄՆ	4395	2463	1933	64207	18241	45966
Գերմանիա	1039	514	525	10409	6728	3681
Ուկրաինա	2104	1126	978	11493	8303	3190
Ֆրանսիա	860	435	425	7524	4129	3395
Մեծ Բրիտանիա	529	271	258	6498	2351	4147
Շվեյցարիա	369	57	312	3878	1983	1896
Թուրքիա	216	647	-431	1647	9166	-7519
ԱՄԷ	415	698	-283	2364	11638	-9274
Այլ երկրներ	12049	5199	6850	87726	47305	40422
Ընդամենը	145214	23269	121945	1046024	215649	830375


ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 06	Հ - 07	Փ - 07	Մ - 07	Ա - 07	Մ - 07	Հ - 07	Հ - 07	Օ - 07	Ս - 07	Հ - 07
1	368.58	-	358.80	353.97	-	-	347.57	-	337.05	-	334.47
2	-	-	358.85	354.09	362.20	357.00	-	340.50	336.80	-	334.47
3	-	-	-	-	362.67	356.88	-	339.82	337.04	336.48	333.82
4	368.73	-	-	-	363.20	357.32	346.47	339.22	-	336.51	332.87
5	366.83	364.33	359.34	354.06	363.46	-	345.97	-	-	336.83	332.53
6	366.51	-	359.21	354.60	363.71	-	345.35	339.05	337.09	337.25	-
7	366.20	364.45	359.38	355.34	-	357.45	345.41	-	337.12	337.85	-
8	366.03	365.05	358.26	-	-	357.52	345.88	-	337.21	-	332.86
9	-	365.11	357.55	356.00	363.78	-	-	338.71	337.16	-	333.32
10	-	367.53	-	-	365.14	356.94	-	338.86	337.38	338.51	333.45
11	365.91	367.57	-	-	366.30	356.06	346.42	339.02	-	339.14	333.19
12	365.62	367.85	357.17	356.14	367.12	-	346.82	339.16	-	340.10	332.76
13	365.11	-	356.21	358.60	367.35	-	347.47	338.53	337.07	340.23	-
14	364.80	-	355.74	359.55	-	356.12	347.73	-	336.93	341.10	-
15	364.34	367.56	354.99	360.38	-	356.03	347.00	-	336.76	-	332.50
16	-	367.00	354.60	360.87	367.49	355.59	-	338.58	336.67	-	332.42
17	-	366.10	-	-	367.20	354.86	-	338.19	336.91	341.02	332.16
18	363.47	364.07	-	-	366.21	354.17	346.36	337.96	-	340.96	331.80
19	363.58	362.96	354.25	361.35	362.98	-	345.24	337.69	-	340.54	330.83
20	363.22	-	353.91	361.35	361.32	-	344.46	337.57	336.84	338.91	-
21	363.04	-	353.81	361.22	-	352.99	343.96	-	336.93	-	-
22	362.81	362.00	353.70	360.59	-	351.56	343.25	-	337.06	-	328.97
23	-	361.35	353.67	359.96	361.14	350.50	-	337.57	337.13	-	327.56
24	-	360.79	-	-	-	349.63	-	337.63	337.18	338.34	326.37
25	362.57	360.46	-	-	360.63	349.05	342.99	337.93	-	337.55	325.30
26	362.34	360.32	353.21	359.68	359.68	-	342.74	337.82	-	336.90	325.15
27	362.33	-	353.29	359.84	358.09	-	341.66	337.64	337.12	336.59	325.15
28	363.18	-	353.61	360.52	356.97	-	341.02	337.64	336.78	335.79	-
29	363.44	360.35	-	361.02	-	348.97	340.95	-	336.56	335.79	324.78
30	363.50	360.07	-	362.13	-	348.80	340.95	337.37	336.49	335.79	324.92
31	-	359.35	-	-	-	347.87	-	337.18	336.45	-	325.09
ժամանակահատվածի վերջ	363.50	359.35	353.61	362.13	356.97	347.87	340.95	337.18	336.45	335.79	325.09
ժամանակահատվածի միջին	364.64	363.71	355.98	358.63	363.33	353.77	344.80	338.35	336.94	338.20	330.28




ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀՀ ԴՐԱՄ / ԵՎՐՈ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 06	Հ - 07	Փ - 07	Մ - 07	Ա - 07	Մ - 07	Հ - 07	Հ - 07	Օ - 07	Ս - 07	Հ - 07
1	486.53	-	464.79	467.63	-	-	467.59	-	461.99	-	474.25
2	-	-	467.22	468.28	482.38	485.70	-	459.85	460.17	-	476.02
3	-	-	-	-	484.74	484.93	-	461.75	460.53	461.15	472.86
4	488.35	-	-	-	485.16	486.42	465.52	461.37	-	458.73	472.51
5	488.21	479.93	467.86	466.05	485.29	-	466.44	-	-	457.42	469.17
6	488.59	-	464.28	463.92	486.39	-	467.33	462.46	461.61	458.26	-
7	486.09	476.85	465.58	465.50	-	484.74	466.75	-	465.83	461.81	-
8	486.71	477.63	465.27	-	-	486.76	465.90	-	465.15	-	470.53
9	-	474.86	464.49	468.21	486.48	-	-	460.51	465.08	-	469.61
10	-	478.45	-	-	488.30	483.12	-	461.56	463.19	463.62	468.06
11	485.78	477.40	-	-	491.79	481.64	462.44	463.30	-	467.84	471.33
12	481.78	477.62	464.57	468.50	492.60	-	463.18	466.45	-	470.15	472.49
13	483.55	-	461.51	471.77	494.71	-	463.70	466.77	460.10	472.41	-
14	483.91	-	463.24	475.25	-	480.26	464.05	-	459.94	474.03	-
15	480.64	473.90	464.40	475.09	-	482.39	461.65	-	457.69	-	471.25
16	-	474.93	465.84	477.29	497.29	481.40	-	466.63	453.70	-	472.90
17	-	474.21	-	-	497.56	481.69	-	466.06	451.63	472.65	470.01
18	476.69	469.98	-	-	496.18	478.70	461.14	465.40	-	473.15	471.16
19	476.11	469.02	464.74	481.50	492.82	-	462.76	465.30	-	472.23	473.05
20	477.67	-	464.75	480.70	491.43	-	461.68	466.52	453.18	473.63	-
21	479.32	-	465.08	480.28	-	475.72	461.84	-	454.05	-	-
22	477.60	469.08	464.94	479.33	-	472.64	459.85	-	455.30	-	470.03
23	-	467.44	463.52	480.58	491.37	471.56	-	465.95	454.89	-	464.02
24	-	470.47	-	-	-	471.65	-	466.64	457.69	475.33	465.21
25	478.30	468.78	-	-	489.81	469.40	461.01	467.46	-	476.38	462.90
26	478.00	467.62	463.91	479.35	490.93	-	461.36	464.27	-	475.23	465.26
27	477.99	-	464.93	477.33	486.86	-	459.87	463.31	458.99	475.50	465.26
28	479.11	-	467.83	481.19	487.01	-	458.26	463.31	459.97	476.15	-
29	478.76	464.89	-	481.89	-	469.47	459.16	-	459.88	476.15	467.16
30	478.73	465.25	-	483.52	-	471.19	459.16	460.54	458.67	476.15	467.59
31	-	466.15	-	-	-	466.84	-	460.55	457.91	-	468.36
ժամանակահատվածի վերջ	478.73	466.15	467.83	483.52	487.01	466.84	459.16	460.55	457.91	476.15	468.36
ժամանակահատվածի միջին	481.75	472.22	464.94	474.91	489.96	478.31	462.76	463.91	459.01	469.90	469.62



ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀՀ ԴՐԱՄ / ՌԴ ՌՈՒԲԼԻ ՄԻՋԻՆ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 06	Հ - 07	Փ - 07	Մ - 07	Ա - 07	Մ - 07	Հ - 07	Հ - 07	Օ - 07	Ս - 07	Հ - 07
1	14.01	-	13.51	13.54	-	-	13.42	-	13.19	-	13.41
2	-	-	13.55	13.55	13.92	13.90	-	13.19	13.16	-	13.44
3	-	-	-	-	13.95	13.86	-	13.21	13.17	13.13	13.40
4	14.05	-	-	-	13.98	13.89	13.38	13.22	-	13.15	13.35
5	14.00	13.84	13.57	13.53	13.97	-	13.36	-	-	13.16	13.30
6	14.00	-	13.54	13.51	14.00	-	13.36	13.21	13.19	13.12	-
7	13.98	13.84	13.53	13.54	-	13.87	13.38	-	13.25	13.16	-
8	13.98	13.86	13.52	-	-	13.89	13.38	-	13.24	-	13.32
9	-	13.81	13.55	13.57	14.03	-	-	13.16	13.23	-	13.34
10	-	13.90	-	-	14.05	13.87	-	13.18	13.31	13.19	13.31
11	13.95	13.88	-	-	14.13	13.81	13.36	13.21	-	13.26	13.34
12	13.90	13.86	13.53	13.58	14.16	-	13.35	13.28	-	13.33	13.35
13	13.90	-	13.52	13.67	14.20	-	13.37	13.27	13.21	13.39	-
14	13.91	-	13.49	13.73	-	13.77	13.35	-	13.23	13.45	-
15	13.87	13.83	13.49	13.78	-	13.80	13.32	-	13.19	-	13.34
16	-	13.82	13.52	13.81	14.23	13.79	-	13.28	13.13	-	13.34
17	-	13.79	-	-	14.23	13.79	-	13.28	13.09	13.46	13.34
18	13.80	13.70	-	-	14.19	13.72	13.31	13.27	-	13.46	13.31
19	13.78	13.68	13.50	13.87	14.10	-	13.30	13.27	-	13.43	13.30
20	13.77	-	13.50	13.88	14.02	-	13.29	13.28	13.09	13.46	-
21	13.82	-	13.51	13.87	-	13.66	13.26	-	13.09	-	-
22	13.80	13.66	13.50	13.85	-	13.61	13.22	-	13.04	-	13.24
23	-	13.62	13.47	13.86	14.04	13.54	-	13.28	13.05	-	13.20
24	-	13.60	-	-	-	13.50	-	13.30	13.11	13.50	13.10
25	13.79	13.61	-	-	13.99	13.48	13.21	13.31	-	13.50	13.07
26	13.75	13.60	13.46	13.83	14.00	-	13.23	13.29	-	13.46	13.08
27	13.75	-	13.50	13.80	13.94	-	13.25	13.24	13.09	13.48	13.08
28	13.79	-	13.52	13.86	13.87	-	13.17	13.24	13.13	13.45	-
29	13.78	13.57	-	13.89	-	13.48	13.22	-	13.11	13.45	13.11
30	13.80	13.55	-	13.92	-	13.47	13.22	13.23	13.06	13.45	13.16
31	-	13.54	-	-	-	13.43	-	13.17	13.12	-	13.15
ժամանակահատվածի վերջ	13.80	13.54	13.52	13.92	13.87	13.43	13.22	13.17	13.12	13.45	13.15
ժամանակահատվածի միջին	13.87	13.73	13.51	13.74	14.05	13.71	13.31	13.24	13.15	13.35	13.27



ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒԽԱՐԺԵՔ

	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ [1]	Ս [1]	Հ [1]	Ն	Դ
2006												
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100) [2]	101.1	101.4	100.3	99.1	101.3	105.0	104.7	106.6	110.1	112.1	113.1	115.9
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	175.8	177.2	176.3	174.8	175.5	184.9	186.0	191.4	199.1	203.2	203.7	207.0
2007												
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	119.2	119.4	117.4	113.7	118.6	121.0	117.5	116.6	115.5	120.3		
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	209.1	210.9	210.0	204.7	210.1	216.2	217.2	219.2	216.6	220.2		

Հաշվարկված է ՀՀ 9 հիմնական գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների նկատմամբ՝ 1999-2003 թթ. կշիռներով:

[1] 2007 թ. օգոստոս – հոկտեմբերը՝ ըստ ՀՀ ԿԲ գնահատումների:

[2] 2006 թվականի իրական փոխարժեքի ցուցանիշները փոփոխվել են Թուրքիայի 2006 թվականի գնածի ցուցանիշների վերանայման արդյունքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


(մլն ԱՄՆ դոլար)

Ցուցանիշներ	2006	2007									
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	1072.0	1063.1	1085.8	1062.9	1120.9	1142.9	1216.0	1270.4	1298.3	1334.0	1376.1
Համախառն միջազգային պահուստներ	1072.0	1063.1	1085.8	1062.9	1120.9	1142.9	1216.0	1270.4	1298.3	1334.0	1376.1
Ոսկի	0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	14.1	14.0	11.6	11.7	8.7	12.1	6.0	6.1	3.5	3.6	9.7
Արտարժույթ [2]	1058.0	1049.1	1074.2	1051.2	1112.3	1130.8	1210.0	1264.3	1294.8	1330.4	1366.4

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով և կուտակման սկզբունքով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 06[5]	Հ - 07	Փ - 07	Մ - 07[6]	Ա - 07	Մ - 07	Հ - 07[6]	Հ - 07	Օ - 07	Ս - 07[6]	Հ - 07
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***321863***	***319660***	***327422***	***318318***	***337411***	***345993***	***373804***	***391697***	***401992***	***410540***	***424108***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-38866***	***-64729***	***-69019***	***-53506***	***-66765***	***-70504***	***-86487***	***-88861***	***-79702***	***-77526***	***-77245***
Կառավարություն	-57716	-71520	-72791	-66621	-88291	-92190	-93753	-85361	-82685	-87856	-89125
Բանկեր	7876	-2302	1948	15393	21413	16417	13276	13051	16598	23770	22496
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	3359	0	19	6770	10929	5670	724	1491	3743	10545	9128
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Ավանդներ (-)	-7400	-10901	-6800	0	0	-1600	0	-1000	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	-3175	-3174	-3416	-1592	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-38988	-42617	-48195	-52146	-47114	-39722	-45304	-55458	-52806	-49860	-44219
Զուտ այլ ակտիվներ	49962	51711	50019	49869	47227	44991	39294	38908	39190	36420	33603
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***278056***	***255734***	***255212***	***260393***	***269863***	***277481***	***288429***	***309241***	***322488***	***330562***	***343927***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***282997***	***254932***	***258404***	***264812***	***270647***	***275489***	***287317***	***302835***	***322289***	***333014***	***346862***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	226841	207306	211752	216130	228534	232730	241867	266024	277035	278591	292130
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	31322	26816	22467	23299	20395	21387	24216	17144	22123	26973	28620
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	23629	19837	23299	24324	20925	20476	20456	18569	22331	26566	25305
Այլ հաշիվներ	1206	972	887	1060	793	896	778	1098	800	884	808
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	717	958	751	1060	755	751	770	992	778	822	803
Այլ հաշիվներ (արտարժույթով)	488	14	135	0	39	146	9	106	22	62	4
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-2202***	***7762***	***-9104***	***19093***	***8582***	***27811***	***17893***	***10295***	***8548***	***13567***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-25863***	***-4290***	***15513***	***-13259***	***-3739***	***-15983***	***-2375***	***9159***	***2177***	***280***
Կառավարություն	-	-13804	-1272	6170	-21670	-3899	-1563	8392	2676	-5171	-1269
Բանկեր	-	-10179	4251	13444	6020	-4996	-3141	-225	3548	7171	-1273
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3500	4100	-6800	0	1600	-1600	1000	-1000	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	3629	5577	3951	-5032	-7392	5582	10155	-2652	-2946	-5640
Զուտ այլ ակտիվներ	-	1749	-1692	-150	-2641	-2236	-5697	-386	283	-2770	-2818
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)	***-***	***-22322***	***-522***	***5181***	***9470***	***7618***	***10949***	***20812***	***13247***	***8074***	***13365***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-28065***	***3472***	***6409***	***5834***	***4842***	***11828***	***15518***	***19454***	***10725***	***13848***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-19535	4446	4378	12404	4196	9137	24157	11011	1556	13539
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-4505	-4350	832	-2904	992	2829	-7072	4979	4850	1647
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-3792	3461	1025	-3399	-449	-20	-1887	3762	4235	-1261
Այլ հաշիվներ	-	-233	-86	173	-267	103	-118	319	-297	84	-77
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	241	-207	309	-305	-4	19	222	-214	44	-19
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-474	121	-135	39	107	-137	97	-84	40	-58
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-0.7***	***2.4***	***-2.8***	***6.0***	***2.5***	***8.0***	***4.8***	***2.6***	***2.1***	***3.3***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-66.5***	***-6.6***	***22.5***	***-24.8***	***-5.6***	***-22.7***	***-2.7***	***10.3***	***2.7***	***0.4***
Կառավարություն	-	-23.9	-1.8	8.5	-32.5	-4.4	-1.7	9.0	3.1	-6.3	-1.4
Բանկեր	-	-129.2	184.6	690.0	39.1	-23.3	-19.1	-1.7	27.2	43.2	-5.4
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր	-	9.3	13.1	8.2	-9.7	-15.7	14.1	22.4	-4.8	-5.6	-11.3
Զուտ այլ ակտիվներ	-	3.5	-3.3	-0.3	-5.3	-4.7	-12.7	-1.0	0.7	-7.1	-7.7
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)	***-***	***-8.0***	***-0.2***	***2.0***	***3.6***	***2.8***	***3.9***	***7.2***	***4.3***	***2.5***	***4.0***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-9.9***	***1.4***	***2.5***	***2.2***	***1.8***	***4.3***	***5.4***	***6.4***	***3.3***	***4.2***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-8.6	2.1	2.1	5.7	1.8	3.9	10.0	4.1	0.6	4.9
Պարտադիր պահուստներ (ՀՀ դրամով)	-	-14.4	-16.2	3.7	-12.5	4.9	13.2	-29.2	29.0	21.9	6.1
Պարտադիր պահուստներ (արտարժույթով)	-	-16.0	17.4	4.4	-14.0	-2.1	-0.1	-9.2	20.3	19.0	-4.7
Այլ հաշիվներ	-	-19.3	-8.8	19.6	-25.2	13.0	-13.2	41.0	-27.1	10.5	-8.7

[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:
[2] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում է փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները:
[3] ԶԱՄ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 363.50 դրամ, 1 ՀՓԻ = 1.5044 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3170 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9628 ԱՄՆ դոլար:
[4] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:
[5] Ներառված են եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 06	Հ - 07	Փ - 07	Մ - 07	Ա - 07	Մ - 07	Հ - 07	Հ - 07	Օ - 07	Ս - 07	Հ - 07
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**10689**	**6054**	**2506**	**5168**	**5919**	**3002**	**570**	**-10572**	**-22516**	**-31606**	**-42936**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	77392	72349	68543	71926	75430	73483	73771	74351	64415	69788	66272
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-59504	-58202	-59299	-59883	-62141	-63291	-64663	-74489	-77983	-91535	-98333
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-7199	-8094	-6738	-6875	-7370	-7190	-8539	-10434	-8948	-9859	-10874
ԶՆԱ	**262374**	**259788**	**268992**	**275027**	**273997**	**273526**	**294678**	**314870**	**331961**	**352345**	**368464**
Կառավարություն	25883	19766	21442	24342	25602	23533	23653	26115	25161	23840	24420
Պահանջներ Կառավարությանը	44101	40858	41179	41583	42969	41956	43621	46666	47164	47876	49600
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	-18218	-21093	-19738	-17241	-17368	-18424	-19968	-20551	-22002	-24036	-25181
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	100037	98715	99881	90636	76804	79716	94558	94248	95267	95980	92598
Պահանջներ ԿԲ նկատմամբ	115312	113616	114834	112790	101285	97557	107578	108015	111546	119363	114661
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-15275	-14901	-14953	-22153	-24481	-17841	-13020	-13767	-16279	-23383	-22064
Տնտեսություն	241447	244234	253930	271586	288471	295521	306250	325591	349685	371240	390674
Ջեռնարկություններ	111836	113840	118703	123969	133631	133986	137641	147856	159352	170041	180641
Դրամով	54785	56184	59061	59345	61303	61932	62517	63053	66508	67934	70953
Արտարժույթով	56894	57509	59494	64475	72190	71901	74931	83657	91743	100734	108285
Արժեթղթեր	157	148	148	149	138	153	193	1146	1101	1373	1403
Տնային տնտեսություններ	119729	119909	125408	136592	144894	151144	158922	168025	180227	190496	199999
Դրամով	56392	57436	67290	80326	91102	100470	110893	120372	131326	140780	149324
Արտարժույթով	63337	62474	58118	56266	53792	50674	48029	47654	48901	49716	50675
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	203	171	177	155	162	76	64	42	234	261	322
Դրամով	148	121	136	116	124	42	33	35	25	35	27
Արտարժույթով	54	49	41	39	38	34	31	7	209	226	296
Այլ ֆինանսական կազմակերպություններ	9679	10314	9642	10869	9783	10314	9624	9668	9872	10442	9711
Դրամով	8668	9144	8180	9189	8027	8695	8140	8188	8490	8629	7960
Արտարժույթով	1012	1170	1461	1681	1756	1620	1484	1480	1382	1813	1751
Զուտ այլ ակտիվներ	-104994	-102927	-106260	-111538	-116880	-125244	-129783	-131084	-138153	-138716	-139227
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3932	4081	5169	5257	5457	5263	5162	3445	3228	3245	3395
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	200	157	132	290	351	296	337	146	503	409	426
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-2	-2	-4	-5	-144	-25	-4	-17	-9	-4	-7
Ներդրումներ փայաբաժիններում	692	719	724	729	742	749	760	766	894	937	944
Միջբանկային պահանջներ	6218	3338	6339	5861	3992	8404	7413	9148	5896	7894	5958
Այլ ակտիվներ	51807	54516	58830	60350	56979	59735	63658	65583	62969	67320	68403
Միջբանկային պարտավորություններ	-6131	-3161	-6238	-5778	-3886	-8232	-7343	-8971	-5501	-7755	-5886
Թողարկված պարտատոմսեր	-3925	-3908	-3872	-3915	-3886	-4066	-3945	-3933	-3948	-3894	-3805
Կապիտալ հաշիվներ	-120664	-121590	-125478	-128412	-130019	-136296	-140740	-142364	-146899	-149013	-151725
Այլ պարտավորություններ	-37123	-37077	-41863	-45914	-46466	-51073	-55081	-54886	-55285	-57854	-56931
ԱՎԱՆԴՆԵՐ	**273062**	**265842**	**271498**	**280194**	**279916**	**276528**	**295248**	**304299**	**309445**	**320738**	**325529**
Դրամով ավանդներ	130140	133676	141000	144372	139820	141972	157636	172832	177299	185473	193007
Ցպահանջ ավանդներ	83141	81161	91174	92942	87562	87585	91155	98594	98887	109847	115763
Ժամկետային ավանդներ	46998	52515	49826	51430	52258	54388	66481	74239	78412	75626	77243
Ավանդներ արտարժույթով	142923	132165	130498	135822	140096	134555	137611	131466	132147	135265	132522
Ցպահանջ ավանդներ	59514	56473	55863	58477	68737	62947	61407	57989	56995	58273	56963
Ժամկետային ավանդներ	83409	75692	74635	77345	71359	71609	76204	73477	75152	76993	75559

ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 06 [6]	Հ - 07	Փ - 07	Մ – 07 [6]	Ա - 07	Մ - 07	Հ - 07 [6]	Հ - 07	Օ - 07	Ս - 07 [6]	Հ - 07
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***332551***	***325715***	***329929***	***323486***	***343330***	***348994***	***374373***	***381125***	***379476***	***378934***	***381172***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***153185***	***134260***	***139716***	***159442***	***151516***	***144943***	***148662***	***173154***	***190999***	***202957***	***218984***
Կառավարություն	-31832	-51754	-51350	-42279	-62689	-68658	-70100	-59246	-57524	-64016	-64705
Տնտեսություն	241461	244248	253942	271598	288482	295532	306260	325599	349692	371246	390678
Չեռնարկ. և կազմակերպ.	111836	113840	118703	123969	133631	133986	137641	147856	159352	170041	180641
որից՝ կուտակված տոկոսներ	1008	1024	963	1091	1133	1171	1191	1227	1316	1334	1404
Տնային տնտեսություններ	119743	119922	125421	136604	144905	151155	158931	168034	180234	190501	200004
որից՝ կուտակված տոկոսներ	1416	1580	1533	1762	1836	1951	2017	2203	2238	2288	2280
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	203	171	177	155	162	76	64	42	234	261	322
որից՝ կուտակված տոկոսներ	1	1	0	0	0	0	0	0	1	1	1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	9679	10314	9642	10869	9783	10314	9624	9668	9872	10442	9711
որից՝ կուտակված տոկոսներ	29	37	23	29	31	28	15	24	29	32	25
Զուտ այլ ակտիվներ	-56443	-58233	-62877	-69877	-74276	-81931	-87498	-93199	-101170	-104273	-106989
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***342326***	***327795***	***339011***	***347106***	***354712***	***359237***	***385416***	***422707***	***438306***	***446563***	***467630***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***485737***	***459975***	***469645***	***482928***	***494847***	***493938***	***523036***	***554279***	***570475***	***581891***	***600156***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	211469	193161	197260	201674	214137	216514	227010	248882	260229	260268	273820
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	83858	82119	91925	94003	88316	88336	91925	99586	99665	110669	116566
որից՝ կուտակված տոկոսներ	22	48	65	48	63	80	43	64	89	68	83
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	46998	52515	49826	51430	52258	54388	66481	74239	78412	75626	77243
որից՝ կուտակված տոկոսներ	467	553	625	703	792	870	839	983	1170	1197	1197
Արտարժույթով ավանդներ	143411	132179	130634	135822	140135	134701	137620	131572	132169	135328	132526
Ցպահանջ [5]	60002	56487	55998	58478	68776	63092	61416	58095	57017	58335	56967
որից՝ կուտակված տոկոսներ	6	17	28	8	13	23	9	16	28	15	19
Ժամկետային	83409	75692	74635	77345	71359	71609	76204	73477	75152	76993	75559
որից՝ կուտակված տոկոսներ	746	730	740	842	839	758	772	818	861	914	938
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-6837***	***4214***	***-6443***	***19844***	***5664***	***25379***	***10678***	***-1649***	***-543***	***2238***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-18925***	***5456***	***19726***	***-7926***	***-6573***	***3719***	***20565***	***17845***	***11958***	***16028***
Կառավարություն	-	-19922	404	9071	-20411	-5968	-1442	10853	1723	-6492	-689
Տնտեսություն	-	2787	9695	17656	16884	7050	10728	19339	24092	21554	19433
Չեռնարկ. և կազմակերպ.	-	2004	4863	5266	9662	355	3655	10215	11495	10690	10600
որից՝ կուտակված տոկոսներ	-	16	-61	127	42	38	20	36	89	18	70
Տնային տնտեսություններ	-	180	5498	11184	8301	6250	7776	9102	12200	10268	9503
որից՝ կուտակված տոկոսներ	-	165	-47	229	74	115	66	186	35	51	-8
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-32	7	-22	7	-86	-12	-22	192	27	61
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0	0	0	0	0	1	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	635	-673	1228	-1086	531	-691	44	205	570	-731
որից՝ կուտակված տոկոսներ	-	8	-14	6	1	-3	-13	8	5	3	-7
Զուտ այլ ակտիվներ	-	-1791	-4643	-7000	-4400	-7655	-5567	-9628	-7970	-3104	-2716
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-14530***	***11216***	***8094***	***7606***	***4525***	***26179***	***37291***	***15600***	***8257***	***21067***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	***-***	***-25762***	***9670***	***13283***	***11918***	***-909***	***29098***	***31243***	***16196***	***11416***	***18266***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-18308	4099	4414	12463	2377	10496	21872	11347	39	13552
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-1739	9806	2077	-5686	19	3589	7661	80	11003	5898
որից՝ կուտակված տոկոսներ	-	27	17	-17	15	17	-37	20	26	-22	15
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	5517	-2689	1604	829	2129	12094	7758	4173	-2786	1617
որից՝ կուտակված տոկոսներ	-	85	72	78	89	79	-31	144	187	28	0
Արտարժույթով ավանդներ	-	-11232	-1546	5189	4312	-5434	2919	-6048	597	3159	-2801
Ցպահանջ	-	-3514	-489	2479	10298	-5684	-1676	-3321	-1078	1318	-1368
որից՝ կուտակված տոկոսներ	-	11	11	-20	5	9	-13	7	12	-13	4
Ժամկետային	-	-7717	-1057	2710	-5986	250	4595	-2727	1675	1841	-1433
որից՝ կուտակված տոկոսներ	-	-16	9	103	-3	-81	13	47	43	52	25

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)											
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	**-2.1**	**1.3**	**-2.0**	**6.1**	**1.6**	**7.3**	**2.9**	**-0.4**	**-0.1**	**0.6**
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	**-12.4**	**4.1**	**14.1**	**-5.0**	**-4.3**	**2.6**	**13.5**	**10.3**	**6.3**	**7.9**
Կառավարություն	-	-62.6	0.8	17.7	-48.3	-9.5	-2.1	15.5	2.9	-11.3	-1.1
Տնտեսություն	-	1.2	4.0	7.0	6.2	2.4	3.6	6.3	7.4	6.2	5.2
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	1.8	4.3	4.4	7.8	0.3	2.7	7.4	7.8	6.7	6.2
Տնային տնտեսություններ	-	0.2	4.6	8.9	6.1	4.3	5.1	5.7	7.3	5.7	5.0
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-15.8	3.9	-12.4	4.5	-53.1	-16.3	-34.8	462.4	11.6	23.4
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	6.6	-6.5	12.7	-10.0	5.4	-6.7	0.5	2.1	5.8	-7.0
Զուտ այլ ակտիվներ	-	-3.2	-8.0	-11.1	6.3	-10.3	-6.8	-11.5	-8.6	-3.1	-2.6
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ	-	**-4.2**	**3.4**	**2.4**	**2.2**	**1.3**	**7.3**	**9.7**	**3.7**	**1.9**	**4.7**
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ	-	**-5.3**	**2.1**	**2.8**	**2.5**	**-0.2**	**5.9**	**6.0**	**2.9**	**2.0**	**3.1**
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-8.7	2.1	2.2	6.2	1.1	4.8	9.6	4.6	0.01	5.2
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-2.1	11.9	2.3	-6.0	0.0	4.1	8.3	0.1	11.0	5.3
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	11.7	-5.1	3.2	1.6	4.1	22.2	11.7	5.6	-3.6	2.1
Արտարժույթով ավանդներ	-	-7.8	-1.2	4.0	3.2	-3.9	2.2	-4.4	0.5	2.4	-2.1
Ցպահանջ	-	-5.9	-0.9	4.4	17.6	-8.3	-2.7	-5.4	-1.9	2.3	-2.3
Ժամկետային	-	-9.3	-1.4	3.6	-7.7	0.4	6.4	-3.6	2.3	2.4	-1.9

[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:

[2] ԶԱՄ-ն ընդգրկում է միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով (1 ԱՄՆ դոլար = 363.50 դրամ, 1 ՀՓԻ = 1.5044 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.3170 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.9628 ԱՄՆ դոլար), առևտրային բանկերի ԶԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքներով:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ներառյալ հաշիվները:

[6] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1[2]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2[3]	Արտարժույթով ավանդներ	M2X[4]
2006							
Դեկտեմբեր	211469	83858	295328	46998	342326	143411	485737
2007							
Հունվար	193161	82119	275280	52515	327795	132179	459975
Փետրվար	197260	91925	289185	49826	339011	130634	469645
Մարտ	201674	94003	295676	51430	347106	135822	482928
Ապրիլ	214137	88316	302453	52258	354712	140135	494847
Մայիս	216514	88336	304849	54388	359237	134701	493938
Հունիս	227010	91925	318935	66481	385416	137620	523036
Հուլիս	248882	99586	348468	74239	422707	131572	554279
Օգոստոս	260229	99665	359894	78412	438306	132169	570475
Սեպտեմբեր	260268	110669	370936	75626	446563	135328	581891
Հոկտեմբեր	273820	116566	390386	77243	467630	132526	600156


[1] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):


[3] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և ՀՀ դրամով ժամկետային ավանդները:

[4] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
350000
300000
250000
200000
150000
100000
50000
0
04
05
06
07
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ ՀՀ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
700000
600000
500000
400000
300000
200000
100000
0
04
05
06
07
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
01
02
03
04
05
06
07


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
01
02
03
04
05
06
07


ՄԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2006					
Դեկտեմբեր	250165	184388	260254	303909	449868
2007					
Հունվար	246224	196002	274670	323995	451456
Փետրվար	259141	201773	291792	340711	472777
Մարտ	271952	208741	304605	354540	490210
Ապրիլ	278648	224187	313612	365797	508714
Մայիս	289215	226922	316872	369782	510489
Հունիս	300236	237177	331976	400605	539652
Հուլիս	305701	248406	350909	430209	559792
Օգոստոս	321852	256558	364602	449500	568175
